600.0281.28.06.17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2017 թվականի №281Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի №50Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԿՈԿ ՍԻՍՏԵՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մայիսի 29-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «ԿՈԿ ՍԻՍՏԵՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Կոկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №50Ա՝

   1) որոշման մեջ «մինչև 2019 թվականի մարտի 16-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի հունիսի 28-ը» բառերով».

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԿՈԿ ՍԻՍՏԵՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կոկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0591 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Կոկ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 990 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ F-400/17, 330 կՎտ, 2017թ.,
2) գեներատոր №1՝ СГ-2-500-16У3, 500 կՎտ, 2017թ.,
3) հիդրոտուրբին №2՝ F-400/17, 330 կՎտ, 2017թ.,
4) գեներատոր №2՝ СГ-2-500-16У3, 500 կՎտ, 2017թ.,
5) հիդրոտուրբին №3՝ F-400/17, 330 կՎտ, 2017թ.,
6) գեներատոր №3՝ СГ-2-500-16У3, 500 կՎտ, 2017թ.:»

2. «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի փետրվարի 2-ի №405 գրությամբ ներկայացված №EA16/00009 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երկու միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 հունիսի 2017թ.
ժամը 16[00]